



Մուտք համակարգ՝


1. Մտնում եք <https://e-request.ysu.am/> կայքէջ և սեղմում **ուղարկել** «կոճակը»:




2. Այդուհետ սեղմում եք **քաղաքացի** «կոճակը»:




3. Հայտի ակտիվացման ծածկագիրը ստանալու համար լրացնում եք ձեր էլեկտրոնային փոստի հասցեն և սեղմում եք **ստանալ ակտիվացման ծածկագիրը** «կոճակը»:



4. Համապատասխան հատվածում լրացնում եք Ձեր էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկված ծածկագիրը:



5. Այդուհետ լրացնում եք Ձեր տվյալները և **փաստաթղթի տեսակ** հատվածից ընտրում համապատասխան տարբերակը:



ա/ Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ մասնագիտական քննություն հանձնելու դեպքում ԵՊՀ ասպիրանտներն ու հայցորդները **փաստաթղթի տեսակ** հատվածից պետք է ընտրեն «**մասնագիտական (որակավորման) քննություն հանձնելու դիմում (ԵՊՀ-ից)**» տողը, իսկ այլ հաստատությունների

ներկայացուցիչները՝ «մասնագիտական (որակավորման) քննություն հանձնելու դիմում (այ բուհից/հաստատությունից)» տողը:

բ/ Նույն սկզբունքով պետք է առաջնորդվել ընդհանուր մասնագիտությունից լրացուցիչ քննություն հանձնելու դեպքում: Վերջինս պետք է հանձնեն այն ասպիրանտները կամ հայցորդները, որոնց բազային կրթությունը չի համապատասխանում ասպիրանտուրայում կամ հայցորդության համակարգում իրենց մասնագիտությանը:

6. **Հաջորդ քայլով լրացնում եք պահանջվող տվյալները և ուղարկում դիմումը:**
Խնդրում ենք նկատի ունենալ, որ մասնագիտական (որակավորման) քննության գրանցվելիս պետք է հստակ նշեք, թե որ մասն եք հանձնելու (1-ն, 2-րդ կամ էլ 1-ին և 2-րդ): Հիշեցնում ենք, որ երկրորդ մասը վերաբերում է ասպիրանտի/հայցորդի թեկնածուական ատենախոսությանը: Այն հանձնում են այն դեպքում, երբ ատենախոսության շուրջ 80 %-ը պատրաստ է: